

Դավիթ Ավետիսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով
պալատի նախագահ, իրավ. գիտ. թեկնածու

ԿԱԼԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ «ՈՐՈՂԱՅԹ ՓԱՌԱՑՈՒՄ» (համեմատաիրավական վերլուծություն)

XVIII դարի երկրորդ կեսին Հայաստանը գտնվում էր երկու հակամարտող միեծանությունների՝ Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության տակ: Անտանելի սոցիալական քաղաքականությունը՝ բարձրացված օրենքի աստիճան, չքողարկված կրոնական խտրականությունը հայ ժողովրդի բոլոր խավերին հասցրել էին արտակարգ ծանր վիճակի: Նման պայմաններում պարբերաբար առաջ էին քաշվում հայ ժողովրդի ազատագրման տարբեր ծրագրեր: Այդ հիմնահարցի լուծմանն էր ուղղված նաև ուշ միջնադարի հայ քաղաքական-իրավական միտքը, մասնավորապես՝ Շ.Շահամիրյանի «Որոգայթ փառացը» (1773թ.): Այդ տրակտատը՝ որպես հայ բուրժուական-իրավական մտքի ականավոր հուշարձան, հայագիտության մեջ դիտարկվում է որպես Հայաստանի ազատագրական ծրագիր՝ հայռուս-վրացական ռազմաքաղաքական եռյակ միությունն ստեղծելու միջոցով¹:

Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառացը»՝ որպես հայ ազգային-ազատագրական շարժման կազմակերպման իրավական կառուցակարգի նախագիծ², ունի նաև 521 հոդվածից բաղկացած օրենսդրական բաժին՝ ազատագրված Հայաստանի համար առաջարկվող օրենքների նախագծերի տեսքով: Տրակտատի այդ բաժնում նախատեսված են նաև դատական իրավունքի նորմեր՝ նվիրված նյութական և դատավարական իրավունքի տարբեր ոլորտներին:

Հարկ է նկատել, որ տարբեր մասնագետների կողմից ուսումնասիրվել են «Որոգայթ փառացի» առանձին ինստիտուտներ, սակայն կալանավորման կիրառմամբ անձի ազատության և անձեռնմխե-

¹ Տե՛ս Գ.Ս.Ղազինյան, Քրեական դատավարության պատմական ր արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001, էջ 33:

² Տե՛ս Хачатрян Г.С., «Западня честолубия» и «Ншавак» Ш.Шаамиряна как памятники армянского права эпохи просвещения. Автореф. канд. дисс., Тбилиси, 1990, էջ 3:

լիության իրավունքի սահմանափակման տեսանկյունից հետազոտություն չի իրականացվել:

Այս օրերին, երբ արագ տեմպերով իրականացվում են քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների մեծածավալ աշխատանքներ, «Որոգայթ փառացում» ամրագրված կալանավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի ոչ միայն պատմական և գիտական, այլև կարևոր գործնական նշանակություն: Այս դատողությունները զուրկ չեն համապատասխան հիմքից, դրանք պայմանավորված են նրանով, որ «Որոգայթ փառացում» կարմիր թելի նման անցնում է մարդու բարձրագույն արժեք լինելու գաղափարը, որը նույնպես դրված է քրեական արդարադատության բարեփոխումների հայեցակարգի հիմքում: Այս առումով ուշագրավ է հատկապես «Որոգայթ փառացի» 3-րդ հոդվածը, որում սահմանված է. «*Յայ թե այլազգի արական կամ իգական սեռի պատկանող յուրաքանչյուր անձ, որը ծնվել է Յայաստանի հողի վրա կամ, գաղթելով օտար աշխարհից, հաստատվել է Յայաստանում՝ հավասարապես և միշտ ազատ է իր գործունեության մեջ (...)*»¹:

Անձի գործունեության ազատության վերաբերյալ այս դրույթը հիմնարար նշանակություն ունի պետության մեջ անձի իրավական կարգավիճակի տեսանկյունից, այն համարվում է անձի և պետության միջև ծավալվող բոլոր տեսակի փոխհարաբերությունների կանոնակարգման հիմքը: Մասնագետների իրավացի գնահատմամբ «Որոգայթ փառացի» հիշյալ դրույթը համահունչ է Ջոն Լոկի՝ մարդու ազատության մասին դրույթին², որի համաձայն. «Քաղաքական իշխանության և դրա ծագման ճիշտ ընկալման համար, մենք պետք է քննության ենթարկենք, թե ինչպիսի բնական վիճակում են գտնվում բոլոր մարդիկ, իսկ դա բացարձակ ազատության վիճակն է՝ իրենց գործողությունների և ունեցվածքի ու անձի տնօրինության վերաբերյալ, որն իրենք են անհրաժեշտ համարում բնության օրենքի սահմաններում՝ առանց թուլտվություն խնդրելու այլ՝ իշխանություն ունեցող անձից, և ամեն մի իրավունք համարվում է փոխադարձ, և ոչ

¹ «Որոգայթ փառացի» հոդվածների մեջբերումները կատարվում են Ռ.Ավագյանի Յայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX դ. –մ.թ. XIX դ.). 3. 2.-երևան, 2002, աշխատանքից:

² Տես Ռ. Ավագյան, Յայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX դ. –մ.թ. XIX դ.). 3. 2.-երևան, 2002, էջ 48, Хачикян А.М., История применения и

որ մյուսից ավելի իրավունքներ չունի: (...) Հասարակության մեջ մարդու ազատությունն այն է, որ նա չի ենթարկվում մեկ այլ իշխանության, բացի նրանից, ինչ սահմանված է պետության համաձայնությանը, չի գտնվում որևէ մեկի իշխանության տակ և սահմանափակված չէ որևէ օրենքով, բացառությամբ այն օրենքների, որոնք կսահմանվեն օրենսդիր մարմինների կողմից՝ նրան ցույց տրված վստահությանը համապատասխան... Դա ազատությունն է ... բոլոր դեպքերում, եթե դա չի արգելում օրենքը՝ հետևելու սեփական ցանկությանը և կախված չլինելու մեկ այլ ինքնական մարդու անհաստատ, անորոշ, անհայտ կամքից»¹:

Անձի գործունեության ազատության իրավունքի վերաբերյալ այսպիսի լայն ընկալումը, իհարկե, հավասարապես երաշխավորում է նաև յուրաքանչյուր անձի անձնական ազատությունն ու անձեռնմխելիությունը, ինչն իր հերթին ենթադրում է, որ անձը կարող է զրկվել իր ազատությունից պետական մարմինների (մեծամասամբ արդարադատության մարմինների) կողմից ոչ կամայական, այլ միայն օրենքով նախատեսված դեպքերում և պատշաճ իրավական ընթացակարգի պահպանմամբ: Սա մի գաղափարախոսություն է, որն ընկած է 20-րդ դարի ժողովրդավարական և իրավական պետությունների սահմանադրությունների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված միջազգային իրավական ակտերի հիմքում:

Իրավունքի տեսությունը զարգացնում է այն գաղափարը, որ թեև յուրաքանչյուր ոք ազատ է, սակայն դա չի կրում բացարձակ բնույթ. հասարակությունն օժտված է այդ ազատությունից զրկելու կամ այն սահմանափակելու իրավասությամբ²: Յուրաքանչյուր իրավական համակարգում անխուսափելիորեն առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է լինում անձի ազատությունը և անձեռնմխելիությունը սահմանափակել ի նպաստ այլ՝ ինչ-որ կենսականորեն ավելի կարևոր շահերի³: Այս տրամաբանությունն ընկած է

правового регулирования наказания в виде лишения свободы в Армении. Ереван, էջ 62:

¹ Տե՛ս Ջոն Լոկ, Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. 2, Մոսկվա, 1962, էջեր 6, 12, 16-17:

² Տե՛ս Գոլբախ Ա.Փ. Избранные произведения. М., 1963, Т.2, էջ 38:

³ Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Անտոնո Կ.Бредли Доклад. Право на свободу и безопасность личности согласно Европейской конвенции по правам человека //Бюллетень по правам человека, 1998. вып.8, էջ 156:

նաև «Որոգայթ փառացի» հիմքում: Իրականում, այն ոչ միայն երաշխավորում է անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, այլև սահմանում է այդ իրավունքի սահմանափակման դեպքերն ու կարգը, անձի իրավունքներն ու պարտականությունները և ամենակարևորը՝ այդ իրավունքի սահմանափակման նկատմամբ նախնական դատական վերահսկողությունը: Այսինքն՝ փորձ է արվել հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը դրանցից որևէ մեկի գերակայությունը կանխելու համար:

«Որոգայթ փառացի» վերլուծությունը ցույց է տալիս, որ անձի ազատությունը և անձեռնմխելիությունը կարող են սահմանափակվել նաև կալանքի միջոցով, որը սակայն չի ընկալվում ներկայիս իմաստով՝ որպես մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոց, այլ ունի մի քանի իրավական բնույթ և կիրառման սահմաններ, կարգ և նպատակ:

Այսպես, Տրակտատի 218-րդ և 503-րդ հոդվածները սահմանում են քրեական գործերով կալանքի կիրառման հիմքերը, կարգն ու պայմանները, իսկ 146-րդ, 147-րդ, 165-րդ, 166-րդ, 209-րդ, 211-րդ և 213-րդ հոդվածները քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման հիմքով կալանքի կիրառման դեպքերը, կարգն ու պայմանները, 308-րդ, 309-րդ և 316-րդ հոդվածներում խոսվում է զինվորական կարգապահությունը խախտած զինվորականների կալանավորման մասին և այլն:

Այլ կերպ ասած՝ «Որոգայթ փառացում» կալանքը սահմանված է ոչ միայն քրեական վարույթի ընթացքում հանցանքի կատարման մեջ կասկածվող անձի պատշաճ վարքագիծը երաշխավորող, նրա ոչ պատշաճ վարքագիծը կանխող հարկադրանքի միջոց, այլև որպես քաղաքացիական պարտավորությունների չկատարման դիմաց պատասխանատվության միջոց և զինվորական կարգապահությունը խախտող զինվորականների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոց: Այսինքն, կալանքը «Որոգայթ փառացում» ներկայացվում է որպես ունիվերսալ բնույթի պետական հարկադրանքի միջոց, որի կիրառման սահմանները բավականին ընդարձակ են:

Փաստորեն, «Որոգայթ փառացում» կալանքի միջոցով անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը կոչված է ապահովելու (կենսականորեն անհրաժեշտ շահ) մի դեպքում՝ քրեադատավարական հարաբերությունների պատշաճ զարգա-

ցումը, մեկ այլ դեպքում՝ քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարումը և երրորդ դեպքում՝ զինվորական կարգապահությունը:

Այժմ անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրի ընդհանուր բնութագրի վերլուծությանը:

Ինչպես նշեցինք վերևում, քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձի կալանավորման հարցերը հիմնականում կանոնակարգված են տրակտատի 218-րդ և 503-րդ հոդվածներում: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ կալանքը չի համարվում որպես խափանման միջոց: Մի դեպքում կալանքը կիրառվում է որպես ապահովող միջոց, որի նպատակն է ապահովել անձի ներկայությունը դատարանում, մեկ այլ դեպքում՝ այն ունի պատժիչ բնույթ և կիրառվում է առանց որևէ հատուկ նպատակի: Այսպես, տրակտատի 503-րդ հոդվածը (**Ամսվա դատավորի¹ գործունեության մասին**) սահմանում է. *«Եթե մեկն ամսվա դատավորին զանգատվում է մեկ ուրիշի մասին՝ որպես քրեական հանցագործի՝ մարդասպանի, վերքեր հասցնողի, ծեծողի կամ պատիվն անարգողի, ապա դատավորը հրավիրում է մեղադրվողին և նրան հայտնում զանգատվողի զանգատը: Եթե մեղադրվողը սպանություն է կատարել՝ իսկույն բանտարկվում է, եթե վերքեր է հասցրել, ծեծել է կամ անարգել, ապա մեղադրվողից, ըստ օրենքի, պահանջում է նրա անձի երաշխավոր, որպեսզի դատական վարույթի ժամանակ դատարանում ապահովի մեղադրյալի ներկայությունը, և ապա բաց է թողնում նրան [մեղադրյալին]:/.../: Տրակտատի 218-րդ հոդվածի (**Քրեական հանցագործի երաշխավորի մասին**) համաձայն. *«Քրեական հանցագործը չի կարող երաշխավոր ունենալ, քանի որ պետք է հարկադիր կերպով բանտում մնա մինչև դատական վարույթի ավարտը: Եթե նրա հանցավոր լինելու մասին բողոքը կասկածելի է, ապա դատարանը կարող է նրա համար երաշխավոր ընդունել, սակայն երաշխավորը պետք է անուն ու համբավ ունեցող մարդ լինի և ավելի քան տասը բյուր (հարյուր հազար) արծաթ դահեկան զնահատվող ունեցվածքի տեր: (...):»:**

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ հոդվածներից՝ ծանր հանցան-

¹ Որոգայք փառացի 354-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքի դատարանի կողմից և դատավորների միջից ամեն ամիս ընտրվում է մեկամսյա դատավոր և մեկ ամիս ժամանակով տրվում անհետաձգելի հայցերի գործերով գիշեր ու ցերեկ միջոցառումներ ձեռնարկելու՝ հայցվորներին օգնելու, փախուստի մեջ գտնվողին կալանելու ու մինչև դատավարության օրը կալանված պահելու և դատարան ներկայացնելու լիազորություններ:

քի կատարման մեջ մեղադրվող քրեական հանցագործների համար կալանքը կիրառվում է անվերապահորեն, առանց որևէ բացառության, ընդ որում՝ բացառելով որևէ այլընտրանքի կիրառումը: Սրանով է պայմանավորված մեր այն դատողությունը, որ կալանքը ներկայացվում է որպես պատժիչ միջոց: Ակնհայտ է, որ այս դեպքում անտեսվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը, որը ժամանակակից իմաստով անձի իրավունքների կարևոր երաշխիք է: Հարկ է նաև նկատել, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը ներկայացվում է որոշակի հակասությունների ձևով: Օրինակ՝ նվազ ծանր հանցագործությունների դեպքում այն որոշակիորեն երաշխավորվում է. խոսքը մասնավորապես նրա մասին է, որ նվազ ծանր հանցագործությունների դեպքում, եթե անձի հանցավոր լինելը կասկածելի է, ապա դատարանը իրավունք ունի նրան երաշխավորությամբ ազատ արձակելու. 218-րդ հոդվածում մասնավորապես կարդում ենք. «...*եթե նրա հանցավոր լինելու մասին բողոքը կասկածելի է, ապա դատարանը կարող է նրա համար երաշխավոր ընդունել...*»: Ասվածի հիման վրա կարելի է փաստել, որ անմեղության կանխավարկածը ներկայացվում է որպես միջոց, որը պաշտպանում է անձանց ոչ ակնհայտ հանցագործություններից, երբ կան կասկածներ նրա կողմից հանցանք կատարած լինելու վերաբերյալ: Եթե անձի կողմից հանցանք կատարած լինելը, թեկուզև նախնական քննության ընթացքում, կասկած չի հարուցում, կամ եթե կասկածը վերաբերում է ծանր հանցագործության, ապա անմեղության կանխավարկածը «չի գործում»¹:

Վերոնշյալ հոդվածներից նաև հետևում է, որ տրակտատում ոչ միայն նահանջ կա անմեղության կանխավարկածից, այլև սահմանված է կանոն այն մասին, որ զուտ հանցանքի ծանրությունը բավարար է անձին կալանքի միջոցով ազատությունից զրկելու համար: Այդուհանդերձ, վերոնշյալ հոդվածներն ունեն նաև որոշակի դրական կողմեր, որոնք արտահայտվում են հետևյալ կերպ՝ նվազ վտանգավորություն ներկայացնող հանցանքների կատարման մեջ կասկածի դեպքում պահանջվում է պարտադիր երաշխավորություն՝ կալանքի կիրառումը կապելով բացառապես երաշխավորության բացակայության հետ: Այս պահանջը նաև հուշում է, որ բոլոր հանցագործություն-

¹ Նկատենք, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի այսպիսի մեկնաբանության մասին տես Ն. Բերրի. Уголовная социология. М., 2005, с. 512-514.

ների վերաբերյալ գործերով պարտադիր պետք է կիրառվի որևէ **ապահովող** միջոց, դրա հարցում հայեցողություն չկա: Եթե հանցանքը ծանր է, ապա պետք է կիրառվի կալանք, իսկ եթե նվազ ծանր է, ապա երաշխավորություն, իսկ վերջինի անհնարինության դեպքում՝ կալանք: Այս կանոնը ցույց է տալիս, որ նվազ ծանր հանցագործությունների դեպքում կալանքը ներկայացվել է որպես բացառիկ միջոց՝ կապվելով բացառապես այլընտրանքային միջոցի կիրառման անհնարինության հետ: Այս տրամաբանությունն այսօր զարգացված է նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում, որում նույնպես նշվում է, որ կալանքը պետք է լինի բացառություն. պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ կոնկրետ վիճակում, որ նախ անձը կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ, որն անհրաժեշտ է խափանել, երկրորդ՝ այլ խափանման միջոցները բավարար չեն անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու, վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի ներկայությունն ապահովելու համար:

Այսպիսով, «Որոգայթ փառացում» կալանքը չի կիրառվում որպես անձի որևէ գործողությունը խափանելու, այլ ընդամենը անձի ներկայությունը դատարանում ապահովելու համար: Այս հետևությունը բխում է նաև տրակտատի 145-րդ հոդվածից, որի համաձայն. **«Յուրաքանչյուր անձ, որի նկատմամբ դատական հայց է հարուցվել, պարտավոր է դատարան ներկայանալ իրեն երաշխավորող անձի ստորագրած երաշխավորագրով, որում գլխավոր պայմանը հետևյալն է. եթե ամբաստանյալը դատարանից խուսափի՝ երաշխավորը պարտավոր է փոխարինել նրան: Եթե ամբաստանյալը երաշխավոր չի ներկայացնում՝ կալանվում է, մինչև դատարանի կողմից վճռի կայացումը»:**

Ասվածը պայմանավորված է դատավարության տիպով և ձևով: Տրակտատի ուսումնասիրությանը զբաղվող մասնագետները միանշանակ այն կարծիքին են, որ դատավարությունը նրանում նկարագրված է որպես մեղադրական, մրցակցային¹, իսկ որպես կանոն այդ դատավարություններում կալանքը այլ բնույթ է ձեռք բերում՝ այն ոչ թե ունենում է խափանող, այլ ապահովող բնույթ, որի նպատակն է

¹ Տե՛ս Գ.Ս.Ղազինյան, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001, էջ 36:

դատական նիստին անձի ներկայությունն ապահովելը¹:

Ինչ վերաբերում է կալանքի կիրառման իրավունք ունեցող սուբյեկտին, ապա ըստ տրակտատի 354-րդ և 503-րդ հոդվածների՝ նման իրավունք ունի մեկամսյա դատավորը², որի պարտականությունն էր անհետաձգելի հայցերի գործերով գիշեր ու ցերեկ միջոցառումներ ձեռնարկելը, մասնավորապես՝ հայցվորներին օգնելու, **փախուստի մեջ գտնվողին կալանելու ու մինչև դատավարության օրը կալանված պահելու և դատարան ներկայացնելու ձևով**:

Կարևոր է նաև ընդգծել, որ «Որոգայթ փառացը» սահմանում է նաև կալանքի ենթակա անձի իրավունքների պաշտպանության որոշակի երաշխիքներ: Խոսքը մասնավորապես վերաբերում է տրակտատի 185-րդ հոդվածում սահմանված նորմին, ըստ որի՝ այն մասին, որ պաշտոնյան, ինչպիսի բարձր իշխանության ծառայող էլ լինի, իրավունք չունի կալանելու նպատակով դուռը ջարդելով տուն մտնել. բնակիչն արդար լինի, թե մեղավոր: Վերադասի հրահանգի համաձայն՝ կարելի է ներս մտնել և ձերբակալել մեղավորին, եթե միայն դուռը բաց է: Թեև այս նորմն առավելապես երաշխավորում է անձի բնակարանի անձեռնմխելիությունը, սակայն կարևոր դրույթ է սահմանում նաև անձի ազատության իրավունքի համար: Կալանավորված անձի իրավունքների երաշխիք է սահմանում նաև տրակտատի 309-րդ հոդվածը, որի համաձայն. «Հայոց նախարարն իրավունք ունի զինվորական յուրաքանչյուր պաշտոնյայի դեմ մեղադրանք ներկայացնել և **կալանել տալ, սակայն կալանավորվածին պաշտոնից հեռացնելու համար պարտավոր է ունենալ արարքի հանցավորության աստիճանից ելնող դատական վճիռ**»: Այս դրույթը սահմանում է շատ կարևոր սկզբունքային պահանջ, մասնավորապես այն, որ միայն դատավճիռը կարող է անձի համար առաջացնել իրավական հետևանք՝ անկախ նրանից անձը կալանավորվել է, թե ոչ: Եթե դատարանի կողմից անձը մեղավոր չի ճանաչվել հանցանքի կատարման մեջ, ուրեմն չի կարող զուտ կալանելն առաջացնել իրավա-

¹ Այս հարցերի մասին մանրամասն տես Ս.И.Люблинский, Свобода личности в уголовном процессе: меры, обеспечивающие неуклонение обвиняемого от правосудия, СГБ, 1906, Кистяковский А.Ф., О пресеченный Обвиняемому способов уклоняться от следствия и суда, СГБ, 1868, և այլն:

² Գ.Ս.Ղազինյանի կարծիքով՝ այս դատավորը քրեական հետապնդման սուբյեկտ էր, և նրան կարելի է համեմատել ժամանակակից քննիչ դատավորի հետ, տես նույն տեղում, էջ 35:

կան որևէ հետևանք:

Բացի կալանքից՝ «Որոգայթ փառացը» նախատեսում է նաև անձի ազատությունը սահմանափակող այլ գործողություններ¹: Նրանում նախատեսված է նաև քրեական հանցագործին ձերբակալելու հնարավորություն, մասնավորապես՝ **186-րդ հոդվածը սահմանում է**. «Պաշտոնատար անձը, համաձայն իր վերադաս իշխանավորի հրահանգի, խուզարկում և իսկույն ձերբակալում է պահանջված մարդուն, և վերջինս պարտավոր է, ենթարկվելով նրան, գնալ, ուր պաշտոնյան հրամայում է»:

¹ Տրակտատի 113-րդ հոդվածը (Գիշերային ժամերին տնից դուրս չգալու մասին) սահմանում է. *«Ամեն ոք, առանց անհրաժեշտության, երեկոյան ժամը 9-ից հետո թող դուրս չգա իր տուն ու տեղից, իսկ եթե հարկադրված է դուրս գալ, պետք է իր հետ ճրագ ունենա, հակառակ դեպքում՝ գիշերապահի պարտքն է նրան բանտարկել մինչև լուսաբաց և ապա քննել. եթե անմեղ ճանաչվի՝ նույն օրն էլ ազատ է արձակում, եթե մեղավոր՝ պատժվում է օրենքի համաձայն»*: Սույն նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ներկայիս իմաստով սահմանել է վարչական իրավախախտում և նախատեսել է դրա համար անձի ազատության սահմանափակում: 159-րդ հոդվածի (Ղեռահաս որբերին աշխատանքով ապահովելու մասին) համաձայն. *«Ամեն ոք, ով գտնում է տասներկու տարեկանից բարձր որբ ու անտեր դեռահաս պատանիներ կամ աղջիկներ, որոնք պարապ լինելով՝ անկարգ-անվայել բաներով են զբաղված, պարտավոր է բռնել նրանց և հանձնել բնակավայրի կառավարչին, որը պարտավոր է նրանց արհեստի տալ»*: Ինչպես տեսնում ենք խուսքը վերաբերում է հասարակական կարգի պահպանության նպատակով իրականացված գործունեության մասին, ընդ որում ուշագրավն այն է, որ այս դեպքում սահմանվում է ինչպես զանցանքի սուբյեկտը, զանցանքի դիսպոզիցիան, այնպես էլ վարույթ իրականացնող սուբյեկտին: Վերոնշյալ դրույթները համեմատելով ՀՀ Սահմանադրության հետ՝ տեսնում ենք, որ դրանք հավասարաժեռ են, ավելին, նույնիսկ կարելի է պնդել, որ «Որոգայթ փառացը» առավել առաջադիմական է: ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով, մինչդեռ «Որոգայթ փառացը» պարտավորեցնում էր բնակավայրի կառավարչին՝ ներկայիս իմաստով տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին, անչափահասներին ապահովել արհեստով: Դա մի քանի հարց էր լուծում. նախ՝ կանխել նման վարքագծի շարունակականությունը, երկրորդ՝ վերացնել հասարակական կարգի խախտման դեպքերը, երրորդ՝ կանխել առավել լուրջ իրավախախտումների կատարումը, չորրորդ՝ ապահովել հասարակական բարոյականությունը: Կարելի է պնդել, որ պետությունը պարտավորություն ուներ սոցիալական հստակ քաղաքականություն իրականացնելու անչափահասների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Ամփոփելով քրեական գործերով կալանքի կիրառման ընդհանուր բնութագիրը՝ կարող ենք եզրակացնել, որ այն բնությամբ ապահովող դատավարական հարկադրանքի միջոց է, ոչ թե խափանող, երկրորդ՝ անմեղության կանխավարկածը որոշակիորեն նահանջած է կալանքի կիրառման դեպքում, երրորդ՝ ծանր հանցագործությունների դեպքում կալանքը կիրառվում է առավելապես որպես պատիժ, չորրորդ՝ կալանք կիրառելու իրավասությունը դատարանին է:

Անդրադառնալով քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով կալանքի հարցերին՝ նշենք, որ այն առավել հանգամանորեն է կարգավորված, քան քրեական հանցագործներին կալանավորելը:

Տրակտատի 209-րդ հոդվածը (**Պարտապանի անձի կամ ունեցվածքի նկատմամբ կալանք սահմանելու մասին**) սահմանում է. «Բացի քրեական գործերից, պարտքի վերաբերյալ յուրաքանչյուր դատավճռի դեպքում, եթե պարտատերը տասնհինգօրյա ժամկետում չի ստանում դատավճռով հաստատված իր առնելիքը, ապա կարող է խնդրագրով դիմել դատարան, որպեսզի պարտատիրոջ անձի կամ ունեցվածքի նկատմամբ կալանք սահմանվի»: Տրակտատի 211-րդ հոդվածի (**Պարտատիրոջ պարտքը վճարելու կարգի մասին**) համաձայն. «Յուրաքանչյուր հայցվոր, եթե (իր տնօրինության տակ է) վերցնում պարտապանի ունեցվածքը, պարտապանի անձը մնում է անձեռնմխելի: Եթե (պարտատերը) հավաքելով պարտապանի ողջ ունեցվածքը՝ պարզում է, որ չի փակում նրա պարտքը, ապա կարող է բռնել և բանտարկել տալ պարտապանին՝ ըստ սահմանված կարգի մեկ տարի հոգալով նրա բանտային ծախսերը: Մեկ տարուց հետո, եթե պարտապանը չի ուզում բանտում ևս երեք տարի մնալ, կարող է պարտավորագիր տալ պարտատիրոջը՝ երեք տարվա ժամկետով, եթե ոչ՝ բանտում կմնա երեք տարի, երեք տարուց հետո նա կարող է ազատ արձակվել, եթե պարտքը կազմում է հայուր արծաթ դահեկան, եթե ավելին է, ապա մնում է բանտում մինչև պարտքը լրիվ վճարելը: 213-րդ հոդվածը (**Պարտապանի կողմից թաքցված ունեցվածքի դատական կարգով տնօրինման մասին**) սահմանում է. «Յուրաքանչյուր պարտապան, որը պարտատերերից թաքցնում է իր ունեցվածքը և դատաբնությանը կեղծ հաշվեցուցակ ներկայացնում և հաստատվում է, որ թաքցրել էր իր ունեցվածքը, այսպիսի պարտապանը պարտքերից չի ազատվում. թաքցրած ունեցվածքը հանձնում է և բանտարկվում մինչև պարտքի լրիվ վճարումը»:

Սույն հոդվածների վերլուծությունից ակնհայտ է, որ թեև կալանքը կիրառվում է որպես պարտավորության չկատարման դիմաց պատասխանատվություն, սակայն, ի տարբերություն քրեական հանցագործներին կալանավորելու ինստիտուտի, տրակտատը պարտքի գործով կալանքի կիրառման համար հստակ սահմանում է այն կիրառելու հիմքերը՝ **հայցվորի կողմից դատավճռով հաստատված առնելիքը տասնհինգօրյա ժամկետում չստանալը կամ պարտքը մարելու համար պարտապանի գույքի անբավարարությունը, կամ մինչև պարտքը ամբողջությամբ մարելը, կարգն ու պայմանները, անձի իրավունքներն ու ազատությունները և այլն:**

Տրակտատի 146-րդ հոդվածը կանոնակարգում է պարտքի գործով կալանվածին կերակրելու հարցը, որի համաձայն. «Պարտքի գործով բանտարկված յուրաքանչյուր պատասխանողի համար հայցվորը պարտավոր է կերակրի և այլ կարիքների համար օրական մեկ արծաթ դահեկան մուծել բանտային վարչություն»: Իսկ 147-րդ հոդվածը սահմանում է հայցվորի կողմից այդ պարտավորության չկատարման հետևանքները, մասնավորապես՝ ազդարարելով. «Անձը, որ կալանքի է վերցվել պարտատիրոջ հայցով, եթե երեք օրվա ընթացքում չի ստանում ամենօրյա մեկ արծաթ դրամը՝ ազատ է հանարվում իր պարտքերից և վճռական հրամանով ազատ է արձակվում բանտից՝ կանոնի տնօրինելու իր գտնվելու տեղը, իսկ հայցվորը կորցնում է իր ստանալիքը»: Հասկանալի է, որ տրակտատը հստակ սահմանազատում է հանրային և մասնավոր հարաբերությունները և դրանով պայմանավորված տարբերակում է դնում քրեական հանցագործների կալանքի և քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման դեպքում կալանքի միջև: Պետությունը, չունենալով պարտավորություն մասնավոր անձանց միջև քաղաքացիաիրավական հարաբերություններին միջամտելու, բնականաբար, չունի նաև պարտավորություն՝ հանրային միջոցներ օգտագործելով պաշտպանել այդ իրավահարաբերություններից տուժածներին: Հենց այդ գաղափարի վրա էլ խարսխված է պարտքի գործերով կալանավորվածներին հայցվորի կողմից կերակրելու պահանջը, իսկ այն չկատարելու դեպքում պատասխանողին ազատ արձակելը: Այս նորմերից հետևում է, որ Շահամիրյանը փորձել է հավասարակշռել պատապանի և պարտատիրոջ շահերը: Այդ հավասարակշռման դրսևորումներից է այն, որ եթե ոսկու, արծաթի և այլ պարտքերի պատճառով բանտարկվածը փախչում է բանտից, ապա նահանգի

կառավարիչը պարտավոր է հատուցել պարտատիրոջ պարտքը (166-րդ հոդված): Ակնհայտ է, որ այս կանոնը կոչված է երաշխավորելու հայցվորի իրավունքը:

Ելնելով մարդասիրության սկզբունքից՝ տրակտատը որոշակի կանոնակարգումներ ունի նաև պարտապանի իրավունքների երաշխավորման համար: Խոսքը մասնավորապես այն մասին է, որ տրակտատի 165-րդ հոդվածի համաձայն. «Ամեն մի պարտապան, որը կալանվել է ոսկու, արծաթի, գինու, ցորենի և այլ պարտքի պատճառով, և բանտում փակված է ոչ որպես քրեական հանցագործ, եթե իր անձի համար ժամանակավոր երաշխավոր գտնի և նրա ձեռքով ստորագրված երաշխավորագիր հանձնի իր բանտապետին՝ կարող է ամեն շաբաթ երեկոյան բանտից դուրս գալ և լույս կիրակի գիշերն ազատ անցկացնել իր ընտանիքի հետ, օրվա մեջ մտնել եկեղեցի, շրջել քաղաքում և նույն երեկոյան նորից վերադառնալ բանտ»:

Եթե համեմատական անցկացնենք քրեական հանցագործներին կալանավորելու և քաղաքացիական պարտավորությունների չկատարման համար կալանավորելու ինստիտուտների միջև, ապա կտեսնենք դրանց կիրառման հարցում էական տարբերություններ: Մասնավորապես, եթե քրեական հացագործությունների դեպքում կալանք կիրառելը համարվում է պարտադիր, ապա քաղաքացիական պարտավորությունների դեպքում միայն այն դեպքում է պարտադիր, երբ անձը չի կարող գտնել երաշխավոր՝ այս կանոնը քրեական հանցագործների դեպքում կիրառելի է միայն նվազ ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով: Բացի այդ, եթե որոշ քրեական հանցագործությունների դեպքում բացառվում է երաշխավորությունը, այլ պարտադիր պետք է կիրառվի կալանք, օրինակ, սպանության դեպքում, ապա քաղաքացիական պարտավորությունների դեպքում պարտադիրություն չկա, այլ պահանջվում է, որ անձը ներկայացնի երաշխավոր, որի չլինելու դեպքում նոր կալանքը դառնում է պարտադիր: Քաղաքացիական պարտավորությունների գործերով կալանվածին պահելը դրվում է պարտատիրոջ վրա, եթե նա չի տրամադրում համապատասխան միջոցներ կալանքի տակ գտնվող պարտատիրոջը պահելու համար, ապա վերջինս ազատվում է: Այս դեպքում հանրային շահը բացակայում է, ուստի նման կանոնակարգում է սահմանված, մինչդեռ, քրեական հանցագործությունների դեպքում հասկանալի է, որ հեղինակը հստակ ընկալում է արարքի հանրային վտանգավորության բնույթը, պետության պար-

տավորությունները նման արարքների դեմ պայքարելու հարցում, ուստիև սահմանում է ոչ միայն կալանքի կիրառման պարտադիրությունը, այլև տուժողի վրա չի դնում կալանվածին կերակրելու պարտավորությունը:

Նկատենք, որ թեև այսօր արդիական չէ քաղաքացիական պարտավորությունների չկատարման հիմքով կալանքի ինստիտուտը, քանի որ այն ուղղակիորեն արգելված է ինչպես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, սակայն իրականությունն այն է, որ պարտքի գործերով կալանքը մինչև 1963 թվականը կիրառվել է եվրոպայում և հայտնի է եղել նաև ռուսական իրականությունում:

Ն. Լանգեն նշում է, որ 17-րդ դարում Ռուսաստանում բանտարկել են ոչ միայն հանցագործությունների մեջ մեղադրվողներին, այլև հայցով պատասխանողներին: Սակայն, ըստ հեղինակի, այդ համարվել է կամայականություն և չարաշահում, որը դադարեցվել է 1637 թվականին՝ Ցար Միխայիլ Ֆեոդորովիչի կողմից արձակված հրամանով, ըստ որի՝ հայցային գործերով որևէ մեկին չպետք է բանտարկել, այլ պետք է հանձնել կատարածուի հսկողությանը¹:

Այս առումով հետաքրքրական է նաև Անգլիայի իրավունքը: Անգլիական իրավունքին հայտնի է անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի կարևորագույն երաշխիքը՝ դատական վերահսկողությունը, որն առաջին անգամ սահմանվեց դեռևս 1215 թվականի Ազատությունների մեծ խարտիայով, այնուհետև Habeas Corpus ակտով, որը պատմության մեջ 39 անգամ վերահաստատվել է²:

1816 թվականի Habeas Corpus վերահաստատված ակտով սահմանվեց, որ դատական վերահսկողության մեխանիզմը տարածվում է նաև պարտքի գործերով ձերբակալման և կալանավորման դեպքերի նկատմամբ³: Սա նշանակում է, փաստորեն, որ Անգլիայում գոյություն է ունեցել պարտքի գործերով ձերբակալում և կալանավորում, որը, սակայն, ի տարբերություն Ռուսական իրավունքի՝ ոչ թե

¹ Николай Ланге, Древнее Русское уголовное судопроизводство (XIV, XV, XVI и половины XVII веков), сочинение, С.-Петербург, 1884, с. 132.

² Дерюжинский В.Ф., Habeas Corpus Act и его приостановка по английскому праву. Очерк основных гарантий личной свободы в Англии и их временного ограничения. Юрьев, 1895.

³ Полянский Н.Н., Уголовное право и уголовный суд Англии, 2-е издание, М., 1969г. С. 288.

վերացվել է, այլ ընդամենը սահմանվել է, որ պարտքի գործերով անձին ազատությունից զրկելը պետք է լինի դատական վերահսկողության օբյեկտ:

Ինչպես նշեցինք, քաղաքացիական գործերով կալանավորումը եվրոպական տարածաշրջանում գոյություն է ունեցել մինչև 1963 թվականը, երբ ընդունվեց Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածին լրացնող թիվ 4 արձանագրությունը, որի 1-ին հոդվածը (**Պարտքերի համար ազատությունից զրկելու արգելքը**) սահմանում է. «Ոչ ոք չի կարող զրկվել ազատությունից լոկ այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու որևէ պայմանագրային պարտավորություն»¹: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պարտքի դիմաց կալանավորելու մասին ուղղակիորեն նշում է պարունակում 1954 թվականի Հաագայի քաղաքացիական դատավարության մասին կոնվենցիան², որի 26-րդ հոդվածում խոսվում է այն մասին, որ. «Պարտքի դիմաց բանտարկելը որպես քաղաքացիական կամ առևտրային գործերով կանխիչ կամ կատարման միջոց չի կարող կիրառվել նաև պայմանավորվող պետություններից մեկի քաղաքացի համարվող օտարերկրացիների նկատմամբ այն դեպքերում, երբ այն չի կիրառվում սեփական քաղաքացիների նկատմամբ: Այն փաստը, որը կարող է օգտագործվել այդ երկրում բնակության վայր ունեցող քաղաքացու կողմից, որպես պատճառ պարտքի դիմաց բանտարկությունից ազատվելու համար, հավասարապես կարող է վկայել պայմանավորվող պետության քաղաքացու օգտին, եթե նույնիսկ այդ փաստը տեղի է ունեցել արտասահմանում»: Ինչպես տեսնում ենք, Կոնվենցիայի մակարդակով թուլատրվում է քաղաքացիական պարտավորությունների համար անձին զրկել ազատությունից, իհարկե ներպետական օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում: Վերևում արդեն նշեցինք, որ դա Հայաստանի համար արդիական չէ, քանի որ արգելվում է ՀՀ Սահմանադրությամբ: Կարծում ենք՝ եվրոպական տարածաշրջանում ևս չի կիրառվում քաղաքացիական պարտավորություն-

¹ Протокол № 4 к Конвенции о защите прав человека и основных свобод об обеспечении некоторых прав и свобод, помимо тех, которые уже включены в Конвенцию и первый Протокол к ней в ред. Протокола N. 11 Страсбург, 16 сентября 1963 года, <http://conventions.coe.int/treaty/rus/treaties/html/046.htm>

² Конвенция по вопросам гражданского процесса (Гаага, 1 марта 1954 г.), http://www.minjust21.ru/konventsia_1954

ների չկատարման դիմաց կալանքը, քանի որ արգելվում է ՄԻԵԿ 5-րդ հոդվածով:

Ինչևէ, անդրադառանալով «Որոգայթ փառացին»՝ նշենք, որ զինվորական կարգապահությունը խախտող զինծառայողների նկատմամբ կալանքի կիրառումն ունի այն նույն օրինաչափությունները, ինչ կալանքի մնացած տեսակները: **Այսպես, տրակտատի 308-րդ հոդվածը (Վերադասի կողմից տույժի ենթարկված զինվորականի ազատ արձակման մասին) սահմանում է. «Յուրաքանչյուր զինվորական, որը կարգապահական տույժի կամ կալանման է ենթարկվել որևէ վերադասի կողմից՝ զորապետից սկսած մինչև հարյուրապետ և վարչատարածքների կառավարիչներ, պատժված լինելով հրամանով հնազանդվում է նրան և ոչ ոք չի կարող նրան ազատ արձակել բացի դատարանի վճռից, որն արդար հատուցում է տալիս պատժվողի և պատժողի արարքներին»:**

Եթե այս դրույթը համեմատենք ներկայում գործող զինվորական կարգապահությունը խախտող զինծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական կալանքի հետ, ապա կտեսնենք, որ դրանք իրարից էականորեն չեն տարբերվում: Երկու դեպքում էլ մնան կալանք կիրառելու իրավասությունը զինվորական հրամանատարությանն է: Սակայն կարելի է վստահաբար պնդել, որ տրակտատը առավել առաջադիմական է, քանի որ «...**ոչ ոք չի կարող նրան ազատ արձակել բացի դատարանի վճռից...**» դրույթը նշանակում է, որ մնան կալանքը գտնվել է դատական վերահսկողության տիրույթում, մինչդեռ գործող զինվորական կալանքը երբեք դատական վերահսկողության օբյեկտ չի եղել: Ավելին, 33-ն միանալով ՄԻԵԿ-ին, զինվորական կալանքի մասով վերապահում էր արել:

Տրակտատի առավելություններից է այն, որ սահմանում է նաև որոշակի իրավական ռեժիմ զինվորական գերիների ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման համար: Նրանում (**316-րդ գերի զինվորական աստիճանավորի հետ վարվելու կարգի մասին**) մասնավորապես սահմանված է, որ «Յուրաքանչյուր գերի ընկած զինվորական՝ աստիճանավոր կամ ղեկավար պաշտոնյա, եթե երդմամբ և ստորագրությամբ խոստանում է, որ տվյալ պատերազմի ընթացքում, որի ժամանակ ինքը գերվեց, մինչև խաղաղության հաստատման պահը, զենք չի բարձրացնի հայոց զորքի դեմ և իրեն գերի վերցնողը որ ժամին կանչի՝ իսկույն հնազանդվելով կներկայանա և կընդունի գերու իր վիճակը, նրան

տրվում է ազատ արձակման թուղթ, ըստ որի՝ նա ազատ-անկաշկանդ կարող է ապրել այն տարածքում, որը նպատակահարմար է գտնում իրեն գերողը. նա կալանքից ազատվում է և սպասում խաղաղության հաստատմանը: **Խաղաղության ժամանակ նրա հետ վարվում են ըստ խաղաղության համաձայնագրի»:**

Անփոփելով «Որոգայթ փառացում» կալանքի հարցերի քննարկումը՝ նշենք, որ «Որոգայթ փառացը», լինելով Սահմանադրության նախագիծ, բնականաբար, չէր կարող առավել մանրամասն կարգավորել կալանքի կիրառման հետ կապված հարցերը: Շատ դրույթներ սահմանված են ընդհանրական տեսքով, ուստի հնարավոր չէ ամբողջությամբ ներկայացնել կալանքի տարբեր կողմերը: Այդուհանդերձ, «Որոգայթ փառացը» մարդու իրավունքների պաշտպանության հայեցակարգի վրա հիմնված իրավական հուշարձան է, որը նախատեսել է ոչ միայն անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, այլև այդ իրավունքի սահմանափակման իրավաչափ հիմքեր, պայմաններ, կարգ ու երաշխիքներ, որոնք առավել բնութագրական են 20-րդ դարի ժողովրդավարական և իրավական պետությունների սահմանադրություններին: Դա վկայում է, որ հեղինակը մարդասիրական և առաջադիմական հայացքներ է ունեցել անձի իրավական վիճակի, պետության հետ փոխհարաբերությունների վերաբերյալ:

David Avetisyan

*Head of the Chamber on Criminal Cases of the Court of Cassation of the RA,
Candidate of Legal Sciences*

**ISSUES OF DETENTION IN "VOROGAYT PARAC"
("TRAP OF VANITY")
(COMPARATIVE-LEGAL ANALYSIS)**

The subject of author's analysis in presented article, are several regulations, which exist in Shahamir Shahamiryan's "Vorogayt Parac" (1773). Mentioned treatise considers as one of the most important historical record of Armenian legal thought. The author discusses the matters on detention, which exist in treatise and gather from it's provisions, that according to "Vorogayt Parac", the right of liberty and personal immunity could be restricted by detention. The author emphasis that in "Vorogayt Parac" detention wasn't considered as a preventive measure, like nowadays' detention, because it had several legal meanings, scopes of application, procedure and targets. According to "Vorogayt Parac", detention could be applied to the person not only in the scopes of criminal procedure in order to guarantee his or her proper behavior, but also in the scopes of civil procedure and to the solders, as a measure of liability for abusing civil obligations and military order. So, according to "Vorogayt Parac", detention was a universal measure of state compulsion, with broad scopes of application.

Summarizing the analysis, the author mentions, that "Vorogayt Parac" was a draft of constitution, so it was unable to regulate the matters on detention in details.